

դրուած իրան օգնել, քան թէ տան մէջ, նա մանաւանդ որ ուսումնարա. նում միշտ իւր ընկերակիցների հետ յարաբերութեան մէջ գտնուելով կաշխատէ միշտ նորանց յարմարուել, պէտք եղած միջոցին իրան պաշտպա- նել և կամ նրանց հետ միանալ ելն. և ահա այդպիսով մեր հասարակա- կան կեանքը աւելի դաստիարակող կարող է լինել քան թէ ընտանիքը. Ուսումնարանին յատուկ եղած միջոցներն շատ մեծ ազդեցութիւն ունին աշակերտների կեանքի վերոյ, թէ ինչպէս նոքա իրանց յարաբերութիւն- ները թէ միւս անհատների և թէ ամբողջութեան հետ, որք անդամներ ինքեանք ևս պիտի ունենան. Ուսումնարանի միասնական կեանքը նորա մէջ կազմակերպումէ բարի մոքեր և ձգտումներ ոչ թէ միայն մասնաւոր անձինքների, այլ նաև ամբողջ հասարակութեան վերաբերմամբ. Այն յար- գանքը, որ մարդ օրէնքի և կարգերի առջև ունի և այն ուրախութիւնն, որ մարդ ստանումէ իւր իւելացի նպատակներին հասնելու միջոցին, յառաջա- նումէ շատ անգամ ուսումնարանական ժամանակից և դորա ինչ տեսակ լինելն կախուած է միասնական կեանքի ինամատարութիւնից:

( Եպոն-ինչ ).

( Թարգմ. ) Ա. Տ. Գարբիէլեան.

## ԳԻՒՂԱՑՈՒ ԲՈՂՈՔԸ.

Կան՝ որ ասում են՝ անհոգ, անգործ ես,  
Ամբողջ ձմեռը պարապմունք շունես.  
Նաղլով ես անցնում բոլոր օրերդ,  
Թափած ես թողնում ամեն գործերդ.

Գիւղացի՝ անհոգ,

Մարդ՝ անուամբ ես լոկ.

— Ամբողջ ամառը այրվում եմ տանջվում՝  
Քարի հետ քաղվում եմ, հողի հետ մաղվում.  
Անցնումեմ օրերս քաղցած ու ծարաւ,  
Գիշեր ու ցերեկ հանգիստ չեմ բնաւ.

Ասացէք խնդրեմ,

Իրաւ, անհոգ եմ.

Հագուստս գձուծ՝ ոտքերս բորիկ,  
Տանջվում եմ սաստիկ՝ լոիկ ու մնջիկ.  
Դառն քրտանց մէջ լողում եմ մարմնով,  
Երկիր եմ հերկում՝ փոշում խեղդուելով.

Ասացէք խնդրեմ,

Դարձեալ անհոգ եմ.

Անցնումէ ամիս՝ կողինք չեմ մտնում,  
Եւ ոչ մի բոպէ հանգիստ չեմ քնում.  
Քար է ծառայում փափուկ բարձիս տեղ,  
Որտեղ մթնումէ՝ քնում եմ այնտեղ.

Ասացէք խնդրեմ.  
Էլի անհոգ եմ.

Բոկոտն եմ շրջել շատ մութ զիշերներ,  
Զեռք ոտս ծակել են տատասկ ու փշեր.  
Կին, որդիք մոոցած, կեանքից ձեռք քաշած.  
Սողնոց ու բուոց ընկեր եմ եղած.

Այսպէս տանջվում եմ,  
Նորից անհոգ եմ.

Չմեռն էլ նոյնպէս անգործ չեմ մնում,  
Սայլ ու գութանիս կոտրածն եմ շինում.  
Խնամարկումն քաջ լծկաններս,  
Ուրախացնում եմ կին ու որդիքս.

Ասացէք խնդրեմ.  
Դեռ ևս անհոգ եմ.

Խեղճ կինս ու աղջիկս ազատ չեն գործից,  
Թէշին ու ջահրէն չեն թողնում ձեռքից.  
Նորա մանում են, թելեր պատրաստում,  
Ես էլ հորի մէջ՝ կտաւ եմ գործում.  
Լինում են օրեր, որ քէփ եմ անում,  
Ընկճուած մարմինս նորից կազդորում.

Այդ կարճ հանգիստը  
Շատ են համարում.

**Գրաշար Ներսէս Տ. Աւետիքեանց.**